

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/1

22 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Գևորգյանի 25.10.2016թ. գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.10.2016թ. թիվ 1110239 ակտի դեմ:

Ա/Ձ Արթուր Գևորգյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.09.2016թ. թիվ 1110239 հանձնարարագրով հանձնարարված էր ՕՀՎ 14-րդ բաժնի համապատասխան աշխատակիցներին Ա/Ձ Արթուր Գևորգյանի մոտ իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Որպես գտնվելու և ստուգման իրականացման վայր հանձնարարագրում նշված է «ք.Երևան, Ն/Ն 9-րդ զանգված, 152., բն. 9» հասցեն: Ակտի կազմման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.08.2016թ. թիվ 1220584 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում 30.08.2016թ-ին կազմված թիվ 1220584 արձանագրությունը:

Վերը նշված հանձնարարագրում նույնպես որպես գտնվելու և ուսումնասիրության իրականացման վայր նշվել է «ք.Երևան, Ն/Ն 9-րդ զանգված, 152., բն. 9» հասցեն: Հարկ է տեղեկացնել, որ համաձայն ՀՀ Պետական Ռեգիստրի կողմից 16.01.2008թ-ին տրված անհատ ձեռնարկատիրոջ գրանցման ՕՍԱ 118377 վկայականի, Ա/Ձ Արթուր Գևորգյանի բնակության վայր, ինչպես նաև գործունեության վայր նշված է «ք.Երևան, Ն/Ն 9-րդ զանգված, 152., բն. 92» այլ ոչ թե բն. 9, ինչպես նշված է հանձնարագրերում: Հետևաբար, գանգատաբերի կարծիքով, ուսումնասիրություն և ստուգում իրականացրած աշխատակիցները դուրս են եկել հանձնարարագրերով իրենց տրված լիազորություններից և ուսումնասիրություն են իրականացրել իրենց չհանձնարարված այլ վայրում:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արթուր Գևորգյանը խնդրում է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.10.2016թ. թիվ 1110239 ստուգման ակտը չեղյալ համարել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.08.2016թ. թիվ 1220584 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արթուր Գևորգյանի մոտ կատարվել է հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման) նպատակով հարկային գների, ՀՀ ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների կողմից իրականացվող արժույթային գործարքների վերահսկողության և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 30.08.2016թ. կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 1220584 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

30.08.2015թ-ին ժամը 16:30-ի սահմաններում կատարվել է հսկիչ գնում՝ գնվել է «ESSE» տեսակի ծխախոտ (1 տուփ), որի դիմաց վճարվել է 460 դրամ: Սակայն վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի

տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց պահանջով ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ գնված ծխախոտի դիմաց վճարված գումարը չի մուտքագրվել ՀԴՄ: Արդյունքում 460 դրամը մուտքագրվել է ՀԴՄ և կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 27.09.2016թ. հրապարակվել է թիվ 1110239 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Արթուր Գևորգյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.10.2016թ. թիվ 1110239 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով հսկիչ գնման ընթացքում արձանագրված խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Քննարկվող դեպքում հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 30.08.2015թ-ի թիվ 1220584 արձանագրությունը ստորագրված է հսկիչ գնումը կատարած պաշտոնատար անձի՝ Գեղամ Բաղդասարյանի, վաճառողուհի Քրիստինե Բաղայանի և Ա/Ձ Արթուր Գևորգյանի կողմից: Ընդ որում, վերջինիս կողմից ստորագրված է նաև «Չունեն առարկություններ» տողը:

Այսինքն, Ա/Ձ Արթուր Գևորգյանի մոտ իրականացված հսկիչ գնման արդյունքներով հիմնավորվել է Ա/Ձ Արթուր Գևորգյանի կողմից ՀՀ կառավարության 01.08.2013թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 17-րդ կետի, 40-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները խախտված լինելու հանգամանքը: Նշված փաստի վերաբերյալ առարկություններ չներկայացվեցին նաև Ա/Ձ Արթուր Գևորգյանի կողմից:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.08.2016թ. թիվ 1220584 և 27.09.2016թ. թիվ 1110239 հանձնարարագրերում (այսուհետ՝ Հանձնարարագրեր) ստուգման իրականացման վայրը՝ ք.Երևան, Ն/Ն 9-րդ զանգված, 15շ., բն. 92-ի փոխարեն նշվել է ք.Երևան, Ն/Ն 9-րդ զանգված, 15շ., բն. 9, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ տվյալ դեպքում Հանձնարարագրերում տեղ է գտել վրիպակ, այն է՝ նշված հասցեում բն. 92-ի փոխարեն նշվել է բն. 9: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ Հանձնարարագրերում նշված բոլոր վավերապայմանները ճիշտ են և վերաբերվում են Ա/Ձ Արթուր Գևորգյանին: Հետևապես, Հանձնարարագրերում տեղ գտած վրիպակը չի կարող հիմք հանդիսանալ հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապացույցները կասկածի տակ դնելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ո Ս Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 11.10.2016թ. թիվ 1110239 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ